ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 289-Ա

« 06 » ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025Թ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 01/30.10/3/7828-2025 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրում աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելու, չսահմանված ու չնախատեսված տեղերում և վայրերում աղբարկղերից, աղբամաններից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված փոխաբեռնման կայաններից կամ աղբավայրերից դուրս երեք խորանարդ մետր և ավելի աղբի կուտակման հանգամանքները պարզելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Խմբի ղեկավարին՝ սույն որոշման առաջին կետում նշված հանգամանքները պարզել մեկ աշխատանքային օրվա ընթացքում և կազմել արձանագրություն:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

«Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ. հոկտեմբերի 06-ի թիվ 284-Ա
որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՉԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Մարգարյան Գեղամ** – մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ(խմբի ղեկավար),
2. **Բաբաջանյան Գրիգոր** – մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետի տեղակալ,
3. **Հարությունյան Գվիդոն** – մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ: